



Յարեկան գինը 10 բուլլ, կէս տարվանը 6 բուլլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր ըստին 2 կոպէկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն շաբաթը և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳՐՈՒՄԻՆԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 բուլլ է, վեց ամսվանը 6 բուլլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ՌԱՐԱՐԱՐԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կրկնում, Փամբակի տանը):
Կայսերական ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցէով. ТИФЛИСЪ, Редакция газеты «Мшакъ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Բժշ-
կական յանձնաժողովի զեկուցումը. Լուսատուող
առարկաների և նախաշինարարութեան
Պետերբուրգի ցուցահանդէսը. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բնամարկ և ուսուցչական
մասը. Արտաքին լուրեր.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵ-
ՐԱԳՐՈՒՄԻՆԻ.—ՅԱՅԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ

«Исторія Арменіи» составилъ В. А. Абаза.
(С. Петербургъ, Типогр. Скороходова, 1888 г.)

Այս օրերս լոյս տեսաւ Պետերբուրգում զեկու-
ցումը Վ. Ա. Աբազայի գրութեանը. ուսուցչական լե-
զուով, «Հայաստանի պատմութիւն» վերնագրով,
որի օրինակը ստացանք իրան հեղինակից:

Վերջոյ Աֆանասիւսի Աբազա ունի և ուրիշ
պատմական հեղինակութիւններ ուսուցչական լեզուով
և մի քանի տարի շարունակ ուսումնասիրելով
հուրպական լեզուներով գրված աղբիւրները հայոց
պատմութեան մասին, այժմ հրատարակել է այդ
կարճատեւ «Հայաստանի պատմութիւնը»: Կարճա-
տեւ ենք ասում, որովհետեւ դիւրը բաղկացած է
ընդամենը 128 երեսից: Գրքի տիպը շատ մաքուր
է, միայն ցաւալի է, որ գրքի սրբագրութիւնը խը-
նամբով չէ արած: Հայոց անունները ստատիկ ա-

ղաւաղված են. նախատակի տեղ տպված է КАЗА-
ДЖЕ, յաճախագատումի տեղ АДЖАХАНАТУМԷ
և այլն և այլն:

Եւ որ վերաբերվում է իրան պատմութեան,
գրութեանը թէ՛ և սեղմված կերպով, կատարեալ
գաղափար է տալիս ընթերցողին Հայաստանի աշ-
խարհագրական և տեղագրական դիրքի, երկրի
բնական հարստութիւնների, հայոց գրականու-
թեան գլխաւոր գանձերի, հայոց եկեղեցու կազ-
մակերպութեան մասին և հնչող ու հասկանալի
ոճով ամփոփ հակադրութիւն է տալիս մեզ հա-
յոց ամբողջ պատմութեան մասին, ամենահին
ժամանակներից սկսած մինչև յիշեալ նախա-
դի նուաճելու ուսուցչական դրոշմով: Գրքի վերջը հե-
ղինակը խօսում է հայոց լեզուի ծագման մասին
և տեղեկութիւն է տալիս մեզ հայոց հին արքու-
նի նշանակների մասին:

Խօսելով հայոց ազգի ընտանեկան մասին
պ. Աբազա մեծ համակրութեամբ է վերաբերվում
դէպի հայերը և աշխատում է ցոյց տալ, որ օ-
տարները, ճանաչելով գլխաւորապէս հայոց վա-
ճառական դասակարգը, մեծ մասամբ աննպատ-
կար ինչ էին կազմել հայերի մասին, այն ինչ հա-
յերի մեծամասնութիւնը հողագործ, համակրելի
ժողովուրդ է:

Բայց պ. Աբազայի հրատարակած գրքի, մեր
կարծիքով, ամենանշանաւոր կէտն այն է, որ այդ
«Հայոց պատմութիւնը» նուիրված է կովկասեան
նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկո-
լաւիչին:

ստորջ տեղեկութիւններ ստանալ. օրինակի հա-
մար ամսույս 22-ին ուրախ Պատրիարքարան լուր
կը հասնի թէ Ներսիս զօրանդուն մէջ բանտար-
կեալ հայերն արձակուած են. «Արեւելք» այս լու-
րին արձագանք կը լինի, սակայն չբաւժնի որ այդ
լուրը կանխահաւ կը համարուի: Տարակուսական
վիճակն այնպէս է որ նոյն իսկ պ. Սարգսի ար-
ձակման լուրն դեռ չը հաստատուեցաւ:

Եւ որ ալ լինի բանտարկեալներու այս վիճա-
կէն, հաստատ համոզում կայ թէ՛ դատական նա-
խարարութեան խորհրդական Վահան Էֆէնդի ա-
մեն ջանք ի գործ կը դնէ ապացուցանելու հա-
մար որ թէ ի Պոլիս, թէ ի Վան և թէ այլուր
ձերբակալեալք անմեղ են և թէ հայոց մէջ ո՛ր է
դիտում չը կայ օսմանեան կատալիսութեան դէմ
չարժաններ ընելու:

Ազգին այս վիճակին մէջ արի և խոհական Պատ-
րիարքի մը պէտքն անհրաժեշտ է, բայց Գարութիւն
Պատրիարք կը շարունակէ մնալ ի Պատրիարքա-
րան. ոչ Պատրիարք է, ոչ Պատրիարք չէ կը նա-
խադահէ Ազգային Վարչութեան, բայց չը բազ-
միր Պատրիարքական աթոռին վրայ, այլ կը նըս-
տի ըովնտի, ցած աթոռի մը վրայ: Կը տնօրե-
նէ դործերը, կը գրէ նամակները, և կը ստորա-
գրէ «Յարութիւն եպիսկոպոս...»:

Կրնամ ըսել թէ ընդհանուր փափազ կայ որ
Պատրիարքը շուտ քաշուի յերոսաղէմատուն,
իրը երուսաղէմի Պատրիարք և այսպէս հնարա-

Պ. Աբազայի հայերի մասին ունեցած համակ-
րելի հայացքը հետ ընթերցողին ծանօթացնելու
համար անհրաժեշտ ենք համարում արտատպել
այստեղ մի քանի կէտեր հեղինակի առաջաբանից,
որ նուիրված է Մեծ Իշխանի անուանը:
«Բարեհաճութիւնը որ Ձեր կայսերական Բարձ-
րութիւնը ցոյց տուցիք իմ խնդրելն նուիրել
Ձեր Օգոստոսիառ. Անուանը իմ գրական աշխա-
տանքը «Исторія Арменіи» վերնագրով, համար-
ձակութիւն է տալիս ինձ դարձնել Ձեր Օգոստո-
սիառ. Անձի բարձր և լուսաւորված ուշադրու-
թիւնը իմ հրատարակութեան նպատակի վրայ»:

«Մեր պարբերական մամուլի մէջ և լրագրի-
րում Հայաստանի մասին գրութեանը շատ հա-
զուագիւտ են, այն ինչ Հայաստանը ուշադրու-
թեան արժանի է արդէն իր բնական հարստու-
թիւններով, որոնք ամենահին ժամանակներից
միշտ գրաւել են ամենահոգոր ազգերին: Իսկ բա-
րոյական կողմից հայերը մատուցին Արեւելքում
ամենամեծ ծառայութիւններից մին ըրիտմոնեայ
աշխարհին, հաւատարմութեամբ մնալով քրիստո-
նէական լոյսի դրօշակակիրներ, չը նայելով որ
փղբորամանութիւն էին կազմում միշտ, մաքառե-
լով անհաւասար դարերի լուսի մէջ հեթանոսների
և մանմետականների դէմ: Հայաստանը և հայոց
ազգը լաւ յայտնի են պատմական գրականութեան
մէջ, բայց այդ գրութեանը, որոնցից շատերը օ-
տար լեզուներով են հրատարակված, իրանց ըն-
դարձակութեան պատճառով պահանջում են եր-
կար և տոկոս ընթերցանութիւն: Սակայն հայե-
րի վերաբերեալ տեղեկութիւնների շատ սահմա-
նափակ լինելը առիթ տուեց անձիդ եղբայրա-
ցութիւնների այդ երկրագրած ազգի մասին: Տի-
վելով նրա առեւտրական դասակարգի զեղծումնե-
րի վրայ Աբազայի ազգի մասին, որը այժմ կազ-
մում է Ռուսաստանի մի մասը, այդ տեսակ
հակադրութիւն կազմելու գործին իբրև հիմք
չեն ծառայել ոչ պատմական իրողութիւնները, և
ոչ էլ այն տպաւորութիւնները, որ դուրս են բե-
րել Հայաստանից եւրոպացի արեւելագետները: Եւ
այդ պատճառով, յիշեալ հակադրութիւնները
ստացան միակողմանի ընտանեկան, որը ան-
կատար լինելով, միշտ անարդար է»:

Այդ հանգամանքները իրաւունք են տալիս
ինձ ենթադրելու, որ Հայաստանի վերաբերեալ
որ և է պատմական խօսքը անօրոտ չի անցնի,
թէ՛ կուր նա լինի իմ ձեռնարկածի նման: Հայաս-
տանի պատմական տեղեկութիւնների մի կարճա-
տեւ հաւաքածու, որը ժողովված է եւրոպա-
ւոր ընծայէ նոր Պատրիարքի ընտրութիւնը: Գա-
րութիւն Պատրիարք որքան շուտ հրատարկ, այն-
քան աւելի օգտակար ծառայութիւն կը մատու-
ցանէ թէ իւր անձին և թէ ազգին:
Իւր անձին ծառայութիւն կը մատուցանէ՝ վա-
սին դի վերջի ամիսներու մէջ իւր ընթացքը ծա-
ռայեց ըստ բաւականին դոհուսակութիւն պատ-
ճառել ազգին և համակրութիւն շահեցնել իրեն,
արդ քանի որ այդ համակրութիւնը դեռ բոլոր-
վին չէ անհետացած նորանոր սխալներով, լաւ է
Պատրիարքին համար որ հրատարկ առանց սպա-
սելու ժողովապետի ցոյցի մը ընդդէմ իրեն:
Ազգին ծառայութիւն կը մատուցանէ՝ վասն
զի Գարութիւն Պատրիարք յուսահատ, չիթեալ
վիճակի մէջ է, շուրաքած մնացել է, և իւր հոգե-
կան այս դառն կացութիւնը կազդէ նաև Կրօնա-
կան և Քաղաքական ժողովականաց վրայ: Այդ
ժողովականներն, որը կազմուած են բաւական աշ-
խարհի տարբերներէ, պէտք ունին իւր և եւան-
դոտ պետի մը: Իսկ ազգը երկուսի մէջ է թէ իւր
Պատրիարքը պարագայից համեմատ շարժելու
կարողութիւնն ունի: Եւ Գարութիւն Պատրիարք
զինքն իր, իւր աչքերն յայտնում են Երուսաղ-
էմի վրայ. Երուսաղէմի պարտն վճարել տալու
համար, իւր Երուսաղէմի Պատրիարքութիւնը դը-
ժուարութեանց չենթարկելու համար շատ բան
չը տեսնելու, չը լսելու կը զարնէ: Իբրան ունի,
բայց լեզու չունենալ օգտակար կը համարի: Քա-

կան լեզուներով թարգմանած հայոց աղբիւրներից,
Զօպէնի աշխատասիրած Հայաստանի ժողովր-
դագրութիւնից, այլ և ուրիշ աղբիւրներից ու առ-
տուածաբանական հեղինակութիւններից»:

Առհասարակ կարելի է ասել որ պ. Աբազայի
գրքը մի ուրախալի երևոյթ է ուսուցչական գրակա-
նութեան մէջ, քանի որ այդ գրականութիւնը
շատ քիչ գրութեան ունի, որոնց միջոցով ուսու-
սումնասիր ընթերցողը կարողանայ ամփոփ
կերպով ծանօթանալ հայոց պատմութեան հետ,
և այդ պատճառով ուսուցչական խնդիրներից մի-
ծամանութեան մէջ, հայոց պատմութեան մա-
սին օրինաւոր գրութեանը բացակայութեան
պատճառով, տարածված էր միշտ հայոց պատ-
մութեան, հայոց ազգային բնաւորութեան, հայոց
եկեղեցու ու գրականութեան մասին բաւական
թերի և մութ հակացողութիւն:

Որպէս Հայաստանի անցեալի մասին և հայոց
ազգի կեանքի ու բնաւորութեան մասին խոճմոտա-
ւոր պ. Վ. Ա. Աբազայի գրի-
քը մեծ արժէք ունի անշուշտ և ցանկալի է որ
աւելի տարածվի ընթերցանելու ուսուցչական
թեան մէջ: Գրքի գինն էլ մատչելի է, այն է 1
բուլլ:

Գ. Ա.

ԲԺՇԿԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԳՐՈՒՄԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Անցեալ անգամ հաղորդեցինք, որ Կովկասեան
բժշկական ընկերութեան մէջ կազմված յանձնաժո-
ղովը այդ ընկերութեան փետրվարի 1-ի նիստում
կարգաց մի ընդարձակ զեկուցում Աւալայի և
Կուրի ջրերի յատկութեան մասին: Զեկուցումը
բաւական մանրամասն էր, և հիմնված այնպիսի
փաստերի վրայ, որ ձեռք էր բերել ինքը յանձ-
նաժողովը սեփական փորձեր անելով: Առանց
մոտեցնել զեկուցման գիտական-մասնագիտական
շատ երկար մանրամասնութիւնների մէջ, մենք կը
բաւականանանք առաջ բերելով զեկուցման եղա-
ւորութիւնները, որոնք կայանում են հետևեալի
մէջ, 1) Աւալայի ջրերը կարող է համարվել լաւ
ջուր, որը համապատասխանում է առողջապա-
հական պահանջներին, և կարող է գործածվել
խմելու համար, նոյն իսկ առանց մաքրելու (Ֆիլ-
տրացիայի): Այդ ջրերը թափանցելի է, առանց
հոտի, և անգոյն: 2) Կուր գետի ջրերը, Թիֆլիսից
վերև, կարող է համարվել լաւ ջուր, միայն
այն դէպքում, երբ կենթարկվի բաւականաչափ
ֆիլտրացիայի: 3) Կուր գետի ջրերը, քաղաքի
սահմաններում, չէ կարող նոյն իսկ մաքրած

նի որ ազգին ընդհանուր, կենսական շահերն հա-
մաձայն չեն Երուսաղէմի մասնաւոր շահերուն
Գարութիւն Պատրիարք ինքն Երուսաղէմի համար
պէտք է աշխատի և մենք մեր գլխուն ձեռք
տեսները:—Ի մի բան կը կարծենք թէ Գարու-
թիւն Պատրիարք որքան ժամանակ աւելի գործոց
գլուխը մնայ, այնքան աւելի ծանր և անախորժ
դէպքեր տեղի պիտի ունենան:

Կրօնական և Քաղաքական ժողովաց յունվար
22-ի ուրախ առաւ նիստը այնպիսի մտածու-
թիւններ կը ներշնչէ մեզ: Այդ օրն ակներև ե-
ղաւ թէ ազգային դժոճոց ուղղութեան մասին
Կրօնական և Քաղաքական ժողովներն իրարմէ
բոլորովին տարբեր տեսութիւններ ունեն, իրարու
պիտի բաղխեն շատ անգամ և մեծամեծ դժու-
թիւններ պիտի ծագին ազգին մէջ, եթէ հաստա-
տամիտ Պատրիարք մը չը գտնուի որ համաձայ-
նութիւն գոյացնէ ասոնց մէջ, առանց ինքն գոր-
ծիք մը լինելու միջոց կամ միակի:

Գունուար 22-ի նստին մէջ շատ խնդիրներ
յուզուած են. մի քանիսն երկրորդական են, ըն-
թացելի գործեր են, որոց անօրինութիւն դժուար
չէ, լրագրաց ալ հաղորդուեցաւ, և ասոնց ո՛ր է
կերպով հետաքրքրական չեն «Մշակի» ընթերցո-
ղաց:

Բայց այդ օրը ժողովը զբաղեցաւ ուրիշ երեք
հարցով, որը յոյժ կարեւոր են ազգին համար, և
որոց մասին գրութեան արշուները ակներև կընեն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄԻՆԻ

Կ. Պոլիս, 25 յունվարի

Վերջի շաբաթուան դէպքերն ու այցելութիւն-
ներն յոյսեր կուտային թէ իրաց վիճակին մէջ շատ
փոփոխութիւններ պիտի լինէին և սակայն մինչև
ցարդ այդ յոյսերը միայն յոյս կը մնան: Իրաւ է
որ Վանէն եկած լուրերը կը հաղորդեն թէ՛ ձեռ-
բակալեալ հայերէն մի քանիսն ազատ արձակուելը
են, սակայն միւս կողմանէ հեռագիրները կը հա-
ղորդեն թէ ի փոխարէն նորանոր ձերբակալու-
թիւնը ևս կատարուած են և այս վերջի ձերբակա-
լաններուն մէջ կը գտնուին ծանօթ անձինք և դի-
դաքի ուսուցիչներ: Սակայն ինչպէս հաղորդած եմ
արդէն, դժուար է երաշխաւորել օրն օրին Հայաս-
տանի մասին տարածուած լուրերն, պէտք է սպասել
Պատրիարքարան հասած պաշտօնական լուրերու
որոնք շատ ուշ կը հասնին, թողունք որ Պատ-
րիարքարանն ալ մեծ գաղտնապահութիւն կընէ:
Բայց մինչև ցարդ եկած պաշտօնական տեղեկու-
թիւնները կը հաստատեն Վանայ մասին ինչ որ
արդէն իբր լուրեր տարածուած էին:
Իսկ Պոլսոյ մէջ ալ դժուար է ամեն օր շատ

Դժնայոց նկատմամբ տեղի ունեցած զրգարաթուլթեանց հեղինակը Պողոս չեպիսկոպոսն է։ Այդ թշուառականը, որ այսքան տարիներէ ի վեր իլ կեդիքէ ու կը կողոպտէ վանը, և որ վերջապէս հեռացաւ անտի, բայց լիք անապատէն կը արուճակէ տարաբաղդ ընել խեղճ վանը պատաստելու համար իւր վերաբարձը, այդ թշուառականը մատնութեանց ու զրգարութեանց մէջ այնքանը մարտ և ճարակիչ, հնարած է ընդհանուր վերթիւն մը կորուսանելու համար բոլոր իւր հակառակորդները։ Ինքն է որ կառավարութեան մատնանիշ կընէ իսկ մը անմեղ անձինք իբր դառաղիքը կառավարութեան դէմ։ Ինքն է որ զաղտաբար կամբաստանէ այդ անմեղներն իբր թէ փութած են վանայ գիւղերը և զրգած են գիւղացիները զէնք առնուլ ընդդէմ կառավարութեան։ Դա է որ մի կեդի նամակ շինել կուտայ իրենքը քսան կեդի ստորագրութիւններ և կը որդէ Պօլիս Հայրիկին։ Նամակը իբր թէ ստորագրողները կը խնդրեն Հայրիկէն որ չուտ իրենց ասցնէ խոտառացուած զէնքերն։ Զգելով այդ նամակը թղթատարին, չարագործ եկեղեցականը արկ եղած միջոցները ձեռք կառնու որպէս զի ամակն ի Պօլիս հասնելուն կառավարութեան որդի գրաւուի իւ արգասիս այդ կեդի նամակը ան քան Հայրիկէն ձեռք անցնելու օտարիւնութեան ձեռք կանցնի։ Ինչ ընէ կառավարութիւնը, քնչպէս կասկածի թէ հայե՛ր՝ մանաւանդ հայ

